

# ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՔ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԻ ՉԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## Դասընթացների մասնակցության հայտերի հրավեր

Սիրով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու անգլերենի դասընթացների, որոնք կազմակերպվում են Լոռու, Ծիրակի և Տավուշի մարզերի զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների համար:

Դասընթացներն իրականացվելու են Բրիտանական խորհրդի կողմից՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող ԵՄ-ն քիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում:

Սույն ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից:

## Դասընթացների նկարագիրը

- Ընդհանուր անգլերենի դասընթացներ առաջարկվելու են սկսնակ, տարրական (A1 և A2) և միջին (B1 և B2) լեզվի իմացության մակարդակ ունեցող մասնակիցների համար՝ ներառելով զբոսաշրջության ոլորտի բառապաշար:
- Դասընթացները նախատեսված են տուրիզմի ոլորտում գործունեություն ծավալող բոլոր հաստատությունների համար՝ *զբոսաշրջային օպերատորներ, գործակալություններ, տեղեկատվական կենտրոններ, մշակութային կենտրոններ, ռեկրեացիոն ծառայություններ, հյուրանոցներ/հյուրատներ, հասարակական սննդի ծառայություն, տրանսպորտային ծառայություններ, պետական կառույց և այլն:*

- Դասերը հիմնականում կբարելավեն ստորև ներկայացված հմտությունները`
  - Բանավոր հաղորդակցում
  - Լսողական հմտություններ
  - Կարդալու և գրելու հմտություններ
  - Քերականություն
- Դասընթացներն անցկացվելու են առցանց ձևաչափով:
- Բոլոր մասնակիցների համար կազմակերպվելու է լեզվի իմացությունը տարբերակող թեստ:
- Մասնակիցների քանակը սահմանափակ է: Վերջնական ընտրությունը կատարվելու է ներկայացված հայտի և թեստավորման արդյունքների հիման վրա` ապահովելով երեք մարզերի և բոլոր ոլոտների հավասար մասնակցության հնարավորությունը:
- Դասընթացների ընդհանուր տևողությունը լինելու է 60 դասաժամ:
- Դասընթացները մեկնարկվելու են մարտ/ապրիլ ամիսներին:
- Դասընթացների օրերն ու ժամերը համաձայնեցվելու են յուրաքանչյուր խմբի մասնակիցների և ուսուցչի հետ առանձին:
- Դասընթացի ավարտին մասնակիցները հանձնելու են Բրիտանական խորհրդի Aptis թեստը:
- Դասընթացը հաջողությամբ ավարտած բոլոր մասնակիցներին տրվելու է հավաստագիր և լեզվի իմացության հավաստագրեր:

Դասընթացին մասնակցելու համար պետք է լրացնել մասնակցության հայտը, որը կարող եք գտնել [հետևյալ հղումով](#):

Գրանցման վերջնաժամկետն է **ս .թ. մարտի 10-ը, ժամը` 17.00:**

Հարցերի դեպքում կարող եք դիմել Մարիամ Արզումանյանին հետևյալ էլ. հասցեով` [mariam.arzumanyan@britishcouncil.am](mailto:mariam.arzumanyan@britishcouncil.am):